

Հայ-լեհական մշակութային համագործակցությունը 1991-2014 թվականներին

Մատինյան Հենրի

***Հանգուցային բառեր.** Հայաստան, Լեհաստան, համագործակցություն, մշակութային ժառանգություն, մշակութային օրեր, փառատոն, ցուցահանդես, շնորհանդես*

Նախաբան

Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև 1992 թ. փետրվարի 26-ին դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո սկիզբ դրվեց նաև մշակույթի, կրթության ու գիտության ոլորտներում երկկողմ համագործակցությանը: Երկու երկրների միջև բարեկամական համագործակցության վերաբերյալ ապագա պայմանագրի քննարկվող նախագծում կողմերը պարտավորվում էին ակտիվացնել կապերը մշակույթի, գիտության ու լուսավորության բնագավառներում, խրախուսել համագործակցությունը ստեղծագործական, գեղարվեստական խորհուրդների, մշակութային հիմնարկությունների ու կազմակերպությունների միջև [1, 7], խթանել երկու երկրների գրական ժառանգության լայնորեն հանրայնացմանը, ընդլայնել երկու երկրների լեզուների ուսումնասիրման հնարավորությունները [1, 8]: Այս դրույթները 1998 թ. հունվարի 27-ին Վարշավայում ներառվեցին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային և գիտական համագործակցության մասին» կնքված համաձայնագրում:

2011 թ. հուլիսի 28-ին Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկու՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառում 2011-2013 թթ. համագործակցության մասին» գործնական ծրագիրը [7, 1]:

Հայ-լեհական մշակութային համագործակցության հիմնական միտումները

Հայ-լեհական մշակութային արդի համագործակցությունը հիմնվում է երկու ժողովուրդների ավանդական հարուստ կապերի և պատմական ընդհանրությունների վրա: Հայերը երկար դարեր ապրել, արարել են

Լեհական թագավորությունում, ստեղծել հարուստ մշակութային ժառանգություն: Խորհրդային Միության փլուզումից հետո, պայմանավորված տարաբնույթ պատճառներով, մեծ թվով հայեր (տարբեր տվյալներով՝ 80-120 հազար [3, 30]), մշտական կամ ժամանակավոր բնակության միտումով հաստատվեցին Լեհաստանում: Նրանցից շատերն ինտեգրվեցին նոր միջավայրում, հիմնեցին հայկական հասարակական, մշակութային ընկերություններ, դարձան լեհահայ համայնքի դարավոր մշակութային ժառանգորդներն ու նրանց գործը շարունակողները: Այս հանգամանքը հավուր պատշաճի գնահատվում է լեհական իշխանությունների կողմից: Դրա վկայություններից մեկը Ջամոշ քաղաքն է, որի տնտեսական, առևտրական և մշակութային կյանքում միջնադարում մեծ դեր են խաղացել հայերը՝ ստանալով հատուկ արտոնություններ Արևելքի հետ առևտուր անելու համար [6, 27]: Այսօր քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը կոչվում է «Հայկական», որի վրա ժամանակին հայ շինարարների կառուցած գեղեցիկ քարե շենքերը առանձնահատուկ հմայք են հաղորդում Ջամոշին՝ դառնալով քաղաքի այցեքարտը: Հաշվի առնելով հայերի ներդրումը քաղաքի պատմության մեջ՝ 2000 թ. փետրվարին Ջամոշի քաղաքապետ Մարեկ Գժելաչիկը Լեհաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Հովակիմյանին առաջարկեց զարգացնել մշակութային և տնտեսական համագործակցությունը Հայաստանի ու Լեհաստանի հետ [6, 27]: Փետրվարի 11-ին նրանք այդ նպատակով ստորագրեցին մտադրությունների մասին հուշագիր: Ջամոշի քաղաքապետը պատրաստակամություն էր հայտնում պայմաններ ստեղծել հայ գործարարների գործունեության համար, կազմակերպել «Հայկական օրեր» ամենամյա «Հետմանյան տոնավաճառի» շրջանակներում, ապահովել քաղաքի պատմական զարգացման մեջ հայերի ներդրման վերաբերյալ նյութերի տարածումը [6, 27-28]: Կարծիքներ փոխանակվեցին Ջամոշի և հայաստանյան քաղաքներից մեկի միջև քույր քաղաքների ձևաչափով համագործակցության, Ջամոշ քաղաքի քանդված հայկական եկեղեցու տեղում հուշատախտակի և հայկական խաչքարի տեղադրման վերաբերյալ [6, 28]:

Հայ-լեհական մշակութային կապերի ամրապնդմանը էապես նպաստեց երկու երկրներում գտնվող ազգային արժեք ներկայացնող մշակութային կոթողների ճակատագրերի բացահայտման, պահպանության ու հայրենադարձման հարցը: 1997 թ. մարտի 21-ին Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Ս. Արևշատյանը խնդրեց պետական դիվանագիտական ջանքերով հնարավոր դարձնել Լվով քաղաքի հայկական Սբ. Աստվածածին եկեղեցում պահվող 1197 թ. Սկևռայի

ավետարանի հայրենադարձումը [2, 35]: Մինչ անհետացումն ավետարանը եկեղեցու սեփականությունն էր և ավելի քան 500 տարի պահվել էր այնտեղ: Այն ստեղծվել է հայտնի հայ մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցու կողմից՝ Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Երկրորդի համար և իրավամբ համարվում է հայ ձեռագրային մշակույթի գլուխգործոցներից մեկը: Ավստրիացի արվեստագետներ Հայդե և Հելմուտ Բուշհաուզենների կարծիքով Սկևռայի ավետարանը 1945 կամ 1946 թթ. ապրիլին տարվել էր Լեհաստան և պահվում էր Լյուբլինի վոյեվոդության Գնեզնո քաղաքի արքեպիսկոպոսարանի արխիվում: Հետագայում ավետարանը նորոգվել էր Գերմանիայի Մայնց քաղաքի Յոհան Գութենբերգի անվան թանգարանի հին գրքերի ու ձեռագրերի վերանորոգման արվեստանոցում [2, 35]: Խորհրդային Միության փլուզումից Լվովի հայկական Մբ. Աստվածածին եկեղեցում մնացած բոլոր գրքերը, ձեռագրերը և փաստաթղթերը հանձնվեցին Մաշտոցի անվան Մատենադարանին, իսկ Մբ. Աստվածածին եկեղեցու տարածքի տնօրինությունը՝ հայկական համայնքին: Տեղի հայկական «Աղբյուր» կազմակերպությունն առաջարկեց Սկևռայի ավետարանը ետ բերել Լեհաստանից և մեկընդմիջտ պահպանության հանձնել Մատենադարանին [2, 36]: ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանը 1998 թ. հունվարի 27-29-ը Լեհաստան կատարած այցի ընթացքում, այս հարցը քննարկելով Լեհաստանի արտաքին գործերի նախարար Բրոնիսլավ Գերեմեկի հետ, խնդրեց խիստ հսկողություն սահմանել, որպեսզի ավետարանը Լեհաստանի տարածքից դուրս չհանվի [4, 53]: 2011 թ. սեպտեմբերին լեհահայ համայնքի անունից Սկևռայի ավետարանը հանձնվեց Մատենադարանին [3, 18]: Լեհական կողմն էլ առաջարկեց բանակցություններ սկսել ՀՀ թանգարաններում հավանականորեն գտնվող այն լեհական մշակութային ստեղծագործությունների վերադարձի հնարավորությունների վերաբերյալ, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին դուրս էին բերվել Լեհաստանից և կարող էին հայտնված լինել Հայաստանում: Մասնավորապես՝ նշվեց ՀՀ պետական պատկերասրահում գտնվող 17-րդ դ. իտալացի նկարիչ Ֆրանչեսկո Գուարդիի № 73 «Պալատային աստիճանը» նկարը [3, 18]: 1998 թ. սեպտեմբերի 4-ին Լեհաստանում ՀՀ գործերի հավատարմատար Աշոտ Հովակիմյանը և դեսպանության առաջին քարտուղար Կարինե Մուջյանը Լեհաստանի մշակույթի և արվեստի նախարար Յոհանա Վնուկ-Նազարովայի հետ հանդիպման ժամանակ ՀՀ իշխանությունների անունից պատրաստակամություն հայտնեցին ընդունել լեհական փորձագետների խմբի, որը կգրադվեր Հայաստանում Երկրորդ

համաշխարհային պատերազմից հետո հայտնված լեհական մշակութային արժեքներով, եթե այդպիսիները կան [5, 53]: Յոաննա Վուկ-Նազարովան բարձր գնահատեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանի հետ Կանադայում ունեցած հանդիպումը, որի ընթացքում քննարկվել էին մշակույթի բնագավառում երկու երկրների միջև հետագա համագործակցության հնարավորությունները՝ սկսած ժամանակակից արվեստի ցուցահանդեսների կազմակերպումից մինչև համագործակցությունը թանգարանների միջև [5, 52]:

2013 թ. նոյեմբերի 23-25-ը Վարշավայում ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը Լեհաստանի մշակույթի ու ազգային ժառանգության նախարար Բ. Ջորոնսկու հետ քննարկեց հայ-լեհական 2014-2015 թթ. մշակութային համագործակցության մանրամասները [8, 116]: Հանդիպման ժամանակ կարևորվեց «ՀՀ կառավարության և ԼՀ կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում 2014-2017 թթ. համագործակցության մասին» միջկառավարական գործնական ծրագրի ստորագրման անհրաժեշտությունը՝ հետագա մշակութային նախագծերը կանոնակարգված կազմակերպելու նպատակով [8, 117]:

Երկկողմ մշակութային համագործակցությունը Լեհաստանի Հանրապետությունում

Ժամանակակից Լեհաստանում հայ համայնքն ակտիվ մասնակցում է երկրի մշակութային կյանքին, ծավալում հասարակական գործունեություն: 1998 թ. հունվարին Լեհաստանում ստեղծվել է «Լեհաստան-Հայաստան» ընկերությունը, որի նպատակն է խթանել երկու երկրների միջև մշակութային, հասարակական և առևտրային կապերը [4, 30]: Գործում են Վարշավայի ու Կրակովի Հայ մշակութային ընկերությունները, հայերի միություններ լեհական տարբեր քաղաքներում: 2006 թ. ապրիլի 13-ին լեհահայ հին համայնքի մի խումբ ճանաչված հասարակական գործիչներ Վարշավայում հիմնեցին «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկություն» հիմնադրամ՝ Էվա Աբգարովիչի նախագահությամբ: Հիմնադրամի նպատակն է լեհահայերի մշակութային ժառանգության և արժեքների պահպանությունը, ինչպես նաև «Ռեչ Պոսպոլիտայի Կրեսների մշակույթի ու պատմության տարածումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով լեհահայոց պատմությանն ու մշակույթին» [16, 6]: Հիմնադրամի պաշտոնական կայքում ստեղծվել է թվային գրադարան, որտեղ ներկայացված են եզակի արխիվային նյութեր, ձեռագրեր, գրքեր լեհահայերի պատմության, մշակույթի և ժառանգության վերաբերյալ [9, 2]: Հիմնադրամի նախաձեռնությամբ 2009 թ. հոկտեմբերի 17-ին Վարշավայի

«Պատմության հետ հանդիպումների տանը» տեղի ունեցավ «Awedis/Աւետիս» հայ-լեհերեն թերթի շնորհանդեսը [9, 2]: Թերթն անվճար է: Այն լուսաբանում է հայ համայնքի գործունեությունը և առաքվում է հայկական Սփյուռքի կենտրոններ: Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկության նախաձեռնությամբ 2010 թ. լույս տեսավ «Լեհահայեր. Lehabajer» ժողովածուն [11, 2], 2012-ին՝ Սոնիկա Ագոպովիչի «Հայոց Վարշավան» գիրքը, որը ճանաչվեց տարվա լավագույն պատմական գիրքը, արժանացավ «Ոսկե արծվառյուծ» մրցանակի [15, 2]:

Լեհաստանի Հանրապետությունում հայ-լեհական մշակութային համագործակցության լավագույն վկայություններից մեկը մի շարք քաղաքներում կանգնեցված հայկական խաչքարերն են, հանդիսավոր պայմաններում բացված հայկական հրապարակների ու պուրակների անվանակոչումները:

2003 թվականին Լեհաստանում Հակոբ Բաղդասարյանի կողմից հիմնադրվել է «Մուսա-լեռ» երգչախումբը, որի կազմում ընդգրկվել են Լեհաստանի տարբեր վայրերից հայազգի արվեստագետներ [9, 4]:

2005 թվականից ի վեր Հայաստանի երեխաները մասնակցում են Լեհաստանի Տորուն քաղաքում անցկացվող «Երեխան և շունը» խորագրով մանկական գեղանկարչության միջազգային մրցույթին՝ արժանանալով բազմաթիվ մրցանակների ու դիպլոմների [7, 1]: Նույն թվականին Վարշավայում անցկացված ազգային փոքրամասնությունների մշակույթին նվիրված փառատոնի շրջանակներում անցկացվել են հայ մշակույթի օրեր, իսկ Վարշավայի «Օկո» մշակույթի կենտրոնում Լեհաստանում ՀՀ դեսպանության հովանավորությամբ և «Հայ մշակույթի համակիրների միության» աջակցությամբ տեղի ունեցավ հայկական երեկո, որի ընթացքում ներկայացվեցին նաև Լեհաստանում ստեղծագործող հայտնի հայ նկարիչների գործերը [7, 6]: Նույն թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 31-ը Վրոցլավի ճարտարապետության թանգարանում տեղի է ունեցել Սերգեյ Փարաջանովի գործերի ցուցահանդեսը՝ «Հակոբ Հովնաթանյան» և «Սայաթ-Նովա» ֆիլմերի ներկայացմամբ [7, 6]:

2008 թ. մեկնարկել է Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուից 17-րդ դարի գորելենների վերականգնողական լեհ-հայկական աշխատանքների ծրագիրը: Հայաստանի ազգային պատկերասրահի մասնագետները վերապատրաստվել են ԼՀ մշակույթի և ազգային ժառանգության նախարարի “Gaude Polonia” կրթաթոշակային ծրագրի շրջանակներում [7, 6]:

2009 թ. հոկտեմբերի 10-11-ը Լեհաստանի Գլիվիցե քաղաքում տեղի

ունեցավ 4-րդ ամենամյա «Հայկական մշակույթի օրեր» միջոցառումը, որ կազմակերպել էր արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի անվան Լեհահայերի միությունը [9, 4]: Միջոցառման շրջանակներում տեղի ունեցավ լեհահայերի պատմությանը նվիրված գիտական քննարկում, հայկական երգացանկով համերգ Լիլի Մարկոսյանի կատարմամբ, ինչպես նաև հայ նկարչուհի Սոնա Հայրապետյանի նկարների ցուցահանդես: Հաջորդ օրը Գլիվիցեի Մբ. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցավ Սուրբ պատարագ հայկական երգեցողության զուգակցմամբ, որին հաջորդեց Ջամոշ քաղաքից եկած «Պերֆորմեր» անսամբլի համերգը Բոգդան Կասպրովիչի ղեկավարությամբ [9, 4]:

Լեհահայ «Մուսա-լեռ» երաժշտական խումբը 2009 թ. օգոստոսի 30-ին մասնակցեց «Վարշավյան սթրիթ փարթի 2009» փառատոնին, որի շրջանակում մի քանի տասնյակ երգեր կատարեց համաշխարհային երաժշտական տարբեր ոճերում [9, 4]:

2009 թվականի հոկտեմբերի 17-ից դեկտեմբերի 6-ը Վարշավայում տեղի է ունեցել «Հայացքն Արարատին. հայերի ճակատագրերը Լեհաստանում» լուսանկարների ցուցահանդեսը [7, 6]: Միջոցառումը կազմակերպվել էր «Պատմության հետ հանդիպման տան» և «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի» ջանքերով: Յուցադրման վայրի ձևավորումը սրահը նմանեցնում էր հայկական եկեղեցիների ներքին հարդարանքին՝ իր խոյակներով ու զարդաքանդակներով, իսկ պատերի լուսանկարներում ներկայացված էին տարբեր ժամանակներում «Պոկուտայից ու Բոկովինայից, անգամ Արարատի ստորոտից» եկած հայեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր պատմությունը [7, 6-7]:

2010 թ. մայիսին Մբ. Գեդարդ վանքի երգչախումբը Մհեր Նավոյանի ղեկավարությամբ մասնակցել է «Հայնովկայի ուղղափառ եկեղեցական երաժշտության օրեր» միջազգային երգչախմբային փառատոնին [7, 6]:

2011 թ. լեհական կողմի նախաձեռնությամբ Հայաստանի երիտասարդ երաժիշտները մասնակցել են “I CULTURE” խորագրով երիտասարդ երաժիշտ-կատարողների նախագծին [7, 6]:

2011 թ. մայիսի 12-16-ը և 2012 թ. մայիսի 10-13-ը Հայաստանը մասնակցել է Վարշավայի Գրքի ավանդական միջազգային տոնավաճառներին՝ պատվավոր հյուրի կարգավիճակով [7, 6-7]:

2013 թ. նոյեմբերին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, պաշտոնական այցով գտնվելով Լեհաստանում, Լեհաստանի Ազգային օպերայի մեծ թատրոնում Քշիշտոֆ Պենդերեցկու 80-ամյակին նվիրված հորեյանական եզրափակիչ համերգի ժամանակ հանդիսավոր պայման-

ներում լեհահայ անվանի կոմպոզիտորին հանձնեց Հայաստանի Հանրապետության «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալը [8, 119]:

2014 թ. հունիսի 18-ից սեպտեմբերի 21-ը Լեհաստանի Սոպոտ քաղաքի Արվեստի պետական պատկերասրահում Հայաստանի Ազգային պատկերասրահի հետ համագործակցության արդյունքում բացվել են «Հովհաննես Այվազովսկի. ժամանակ և հավերժություն», «Լեհահայ Թեոդոր Աքսենտովիչը» խորագրով ցուցահանդեսներ [13, 1]:

Երկրորդ մշակութային համագործակցությունը Հայաստանի Հանրապետությունում

Չնայած Հայաստանում լեհական համայնքի փոքրաթվությունը, լեհերն այստեղ ստեղծել են իրենց միավորող մի քանի կազմակերպություններ, որոնք փորձում են ակտիվություն դրսևորել մշակութային բնույթի միջոցառումներում: Դրանց ջանքերով 2005 թվականի հուլիսի 10-ին Երևանում տեղի է ունեցել լեհ լուսանկարիչ Իրենեուշ Սիրանեկի ցուցահանդեսը [7, 1]:

2009 թ. հոկտեմբերին Երևանում ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ «21-ի հեռանկարներ» 10-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում կայացան «Քշիշտով Պենդերեցկու օրերը Հայաստանում» [7, 1]: Փառատոնի չորս համերգների ընթացքում հնչեցին անվանի կոմպոզիտորի շուրջ երկու տասնյակից ավելի ստեղծագործությունները. նա պարզևատրվեց ՀՀ «Պատվո շքանշանով» [7, 2]:

2009 թ. հուլիսի 12-19-ը «Ոսկե ծիրան» 6-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության և ՀՀ-ում Լեհաստանի դեսպանության աջակցությամբ «Ոսկե ծիրան» բարձրագույն կինոդպրոցում վարպետության դասընթաց անցկացրեց լեհ հանրահայտ կինոռեժիսոր, սցենարիստ Քշիշտով Զանուսին: Կազմակերպվեց լեհական ֆիլմերի ցուցադրություն [7, 2]:

2010 թ. հոկտեմբերի 12-14-ը Երևանում մանկապատանեկան ֆիլմերի 6-րդ միջազգային փառատոնի շրջանակում անցկացվեց «Ես իրավունքներ ունեմ» խորագրով երեխաների աշխատանքների ցուցահանդեսը, որին մասնակցեցին նաև լեհ երեխաները [7, 2]:

2010 թվականին ՀՀ-ում Լեհաստանի դեսպանության հետ համատեղ իրականացվեց Շոպենի 200-ամյակին նվիրված մշակութային ծրագիր, որի շրջանակներում նոյեմբերի 1-11-ը Երևանում կայացավ «Շոպենի տարի» խորագրով երիտասարդ դաշնակահարների հանրապետական մրցույթ [7, 2]: Նույն խորագրի ներքո տեղի ունեցավ լեհ ռեժիսոր Եժի

Անչակի «Շոպեն. սիրո տենչանք» ֆիլմի ցուցադրությունը, ինչպես նաև լեհ դաշնակահար Սլավոմիր Վիլկիի և Հայաստանի պետական ֆիլհար-մոնիկ նվագախմբի համատեղ գալա համերգը [7, 3]:

2010 թ. «Արմմոնո» միջազգային 8-րդ թատերական փառատոնին մասնակցեց Լեհաստանի մոնոփառատոնների ղեկավար-տնօրեն Վեցլավ Գերասը [7, 3]:

Երկկողմ մշակութային համագործակցության առումով մեծ թվով միջոցառումներ տեղի ունեցան 2011 թվականին: Մասնավորապես՝ ապրիլի 11-ին «Արմմոնո» միջազգային 9-րդ թատերական փառատոնին ներկայացվեց Գաբրիելա Մուսկալայի «Բուենոս Այրեսից վերադառնալիս» մոնոներկայացումը [7, 3]: «Ոսկե ծիրան» 8-րդ միջազգային կինոփառատոնին մասնակցեց Անջել Վայդայի կինոդպրոցի տնօրեն Վոյչեխ Մարչևսկին [7, 3]: «Լեհական երաժշտական հինգշաբթի» նախագծի շրջանակներում հուլիսի 21-ին կայացավ Կրիստինա Ռաչինսկայի դաշնամուրային մենահամերգը՝ «Լիստից մինչև Շոպեն» խորագրով [7, 3]: Հոկտեմբերի 1-ին և 2-ին «Գաֆելաճեան արվեստի կենտրոնում» և “Mezzo” ակումբում կայացան «Ժեշով Կլեզմեր Բենդ» խմբի համերգները [7, 3]: Հոկտեմբերի 20-ին Երևանում տեղի ունեցավ ԼՀ դեսպանության հրավերով Հայաստան ժամանած «Արթուր Դուսկոնիչ» ջազային տրիոյի համերգը: Հոկտեմբերի 27-ին «Երաժշտական հինգշաբթիներ» համերգային շարքի շրջանակներում Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ «Գառնի» վոկալ կվինտետի համերգը: Կվինտետը ներկայացրեց հայկական հոգևոր և ազգագրական ստեղծագործություններ՝ առանց նվագակցության: Համերգը կազմակերպվել էր ԼՀ դեսպանության կողմից՝ ԵՄ-ում Լեհաստանի նախագահության առթիվ: Նոյեմբերի 25-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ Հայկ Մելիքյանի դաշնամուրային համերգը, որի ընթացքում հնչեցին հայ և լեհ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: «Գրական տապան» ծրագրին մասնակցեց դերասան, թատերական բեմադրիչ Յացեկ Պացոխան: Դեկտեմբերի 20-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կազմակերպվեց բանաստեղծ Չեսլավ Միլոշի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական երեկո, որի ընթացքում տեղի ունեցավ Միլոշի պոեզիայի առաջին հայերեն թարգմանված բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը [7, 3]:

Մշակութային երկկողմ համագործակցության առումներով հազեցած էր նաև 2012 թվականը:

Փետրվարի 29-ից մարտի 5-ը Երևանում «Արմմոնո» միջազգային թատերական 10-րդ հորեյանական փառատոնին խաղացել է դերասան

Յանոշ Ստոլարսկին Չեսլավ Միլոշի «Օրփեոս և Էվրիդիկե» ներկայացումով [7, 3]: Ապրիլի 25-ին Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանում կայացավ լեհ հայտնի հայագետ Անջեյ Պիսովիչի հրապարակային դասախոսությունը՝ նվիրված լեհ հայտնի բանաստեղծ Ջրիգնս Շերբերտի կյանքին [7, 4]: «Ոսկե ծիրան» 9-րդ միջազգային կինոփառատոնը հյուրընկալեց աշխարհառօրյակ լեհ կինոռեժիսոր Ագնիեշկա Նոլանդին: «Երևանյան պրեմիերաներ» ծրագրում ներկայացվեց նրա՝ Ամերիկյան կինոակադեմիայի «Օսկարի» մրցանակակիր «Խավարում» ֆիլմը [7, 4]: «Ոսկե ծիրանը» Նոլանդին շնորհեց «Փարաջանովյան Թալեր» մրցանակ [7, 4]: Կինոփառատոնում լեհ կինոռեժիսորներ Անկա և Վիլիելմ Սասնալների «Հեռվից սիրուն է երևում» ֆիլմը արժանացավ «Արծաթե ծիրան» հատուկ մրցանակի [7, 4]: Ապրիլի 20-23-ը Լեհաստանի Ազգային գրադարանի տնօրենի տեղակալ Եվա Պոտժեբնիցկան մասնակցեց «Երևանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի բացման արարողության հիմնական միջոցառումներին [7, 5]: Ապրիլ-մայիս ամիսներին իրականացվեցին միջոցառումներ «Լեհական օրեր Հայաստանում» խորագրի ներքո, որի շրջանակներում Երևանի մետրոյի ուղևորները առիթ ունեցան ծանոթանալու լեհ պոետների՝ հայերեն թարգմանված ստեղծագործություններին: Ապրիլի 25-26-ը Հայաստանի երեք բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղի ունեցան լեհ գրականության և պատմության մասին դասախոսություններ [7, 5]: Ապրիլի 27-ին Երևանի «Տիգրան Մեծ» հրատարակչությունը տպագրեց պոռֆ. Բելլա Բարսեղյանի «Յուլիոշ Սլովացկու արյան կանչը՝ հայ և լեհ արքա-ոգին» գիրքը [7, 5]: Մայիսի 3-ին Լեհաստանի Սահմանադրության օրվա կապակցությամբ «Պրոմնի» ժողովրդական համույթը Էլույթ ունեցավ «Արամ Խաչատրյան» համերգասրահում, որի ժամանակ ներկայացվեցին Լեհաստանի յոթ շրջանների ազգային պարերը [7, 5]: Հոկտեմբերի 4-15-ը Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպվեց լեհ նկարիչ Ռիշարդ Ստրիեցի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Հոկտեմբերի 9-ին Երևանում կայացավ «100 բանաստեղծություն. Նոբելյան մրցանակի դափնեկիրների և ժամանակակից լեհ բանաստեղծների ստեղծագործություններ» գրքի շնորհանդեսը [7, 5]: 2012 թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը ընդունեց Սոպոտի քաղաքապետ Յացեկ Կարնովսկու գլխավորած պատվիրակությանը, որի ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ 2014 թ. Սոպոտի պետական պատկերասրահում Հովհաննես Այվազովսկու և հայկական ծագումով Թեոդոր Աքսենտովիչի ստեղծագործությունների ցուցահան-

դեսներ, իսկ 2015 թ. Հայաստանում և Լեհաստանում մշակույթի օրեր անցկացնելու մասին [7, 7]:

2013 թ. մայիսի 27-ին Երևանի կենտրոնական զբոսայգում կայացավ Լեհաստանից ժամանած «Չուպագա» ժողովրդական խմբի համերգը, իսկ սեպտեմբերի 19-21-ը տեղի ունեցավ Լեհաստանի Հանրապետության մշակույթի և ազգային ժառանգության նախարար Բ. Զդրոնսկու եռօրյա այցը Հայաստան [8, 117]: Նույն թվականին տպագրվեց 1996 թ. Նոբելյան մրցանակակիր լեհ բանաստեղծուհի Վիսլավա Շիմբորսկայի «Բերկրանք և հուսահատություն» բանաստեղծությունների ընտրանին [8, 117]: «Ոսկե ծիրան 2013» միջազգային կինոփառատոնի «Կորիզ» անվանակարգում ժյուրիի հատուկ դիպլոմի արժանացավ լեհ ռեժիսոր Լուկաշ Օստալսկու «Մայրը» ֆիլմը, իսկ «Գրական տապան 2013» մրցույթին մասնակցեց լեհ հայտնի գրող Յանուշ Վիշնևսկին [8, 117]:

2014 թ. հունվարի 13-16-ը Երևանում ՀՀ նախագահի հովանու ներքո անցկացվեցին «Քշիշտոֆ Պենդերեցկու օրերը Հայաստանում» [18, 1]: Հնչեցին հեղինակի ավելի քան 20 գործեր. հեղինակը Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Էդվարդ Թոփչյանի հետ դեկավարեց համերգը [18, 1]:

2014 թ. փետրվարի 28-ին Գյումրիի “Style” պատկերասրահում բացվեց հայկական ժառանգությանը նվիրված լուսանկարչական ցուցահանդես, որտեղ ներկայացված էր նաև լեհահայերի ժառանգությունը, այդ թվում՝ Գրիգոր Եպիսկոպոսին Լվով քաղաքում հայոց արքեպիսկոպոսություն հիմնելու թույլտվություն տալու մասին փաստաթուղթը, որ 1367 թ. տվել էր Լեհաստանի թագավոր Յան Կաժիմիեժը [18, 1-3]:

2014 թ. հոկտեմբերի 7-ին Հայաստանի Ազգային պատկերասրահում բացվեց անվանի լեհահայ նկարիչ Թեոդոր Աքսենտովիչի նկարների ցուցահանդեսը, որ անվանի նկարչի առաջին ցուցադրությունն էր Հայաստանում [14, 3]:

Եզրակացություն

Հայ-լեհական մշակութային համագործակցությունը արդի շրջանում հիմնվում է պատմական հարուստ ժառանգության և երկու երկրների միջև ձեռքբերված կառավարական համաձայնագրի վրա: Բազմաթիվ հանգամանքներով պայմանավորված՝ երկկողմ մշակութային համագործակցությունն առավել ակտիվ է Լեհաստանում, որտեղ գործում են մի քանի տասնյակ հայկական մշակութային ընկերություններ: Դրանք հետևողական և նպատակային զգալի աշխատանք են տանում լեհահայոց մշակութային ժառանգության պահպանման, երկու երկրների մշակու-

թային համագործակցության զարգացման, ինչպես նաև կապերի ամրապնդման ուղղությամբ: Այդ ընկերությունների և մշակույթի բնագավառում մեծ հաջողությունների հասած անվանի լեհահայերի, մշակութային ու հասարակական գործիչների ջանքերով ու նախաձեռնությամբ Լեհաստանում և Հայաստանում յուրաքանչյուր տարի տեղի են ունենում բազմաբնույթ միջոցառումներ, համերգներ, ցուցահանդեսներ, փառատոններ, մշակութային օրեր և այլն:

Գրականություն

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 1, գործ N 222, 154 էջ:
2. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 2, գործ N 113, 198 էջ:
3. ՀՀ ԱԳՆ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 3, գործ N 213, 163 էջ:
4. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 3, գործ N 214, 100 էջ:
5. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 3, գործ N 215, 169 էջ:
6. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 8, գործ N 40, 142 էջ:
7. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 57, գործ N 57, 123 էջ:
8. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 19, գործ N 58, 125 էջ:
9. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 1, 2009.
10. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 15, 2013.
11. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 17, 2013.
12. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 18, 2014.
13. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 19, 2014.
14. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 20, 2014.

15. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 26, 2016.

16. Czasopismo ormiańskie Awedis Աւետիս, nr 27, 2016.

Армяно-польское культурное сотрудничество 1991-2014 гг.

Матинян Генри

Резюме

Ключевые слова: *Армения, Польша, сотрудничество, культурное наследие, дни культуры, фестиваль, выставка, презентация.*

26 февраля 1992 года между Республикой Армения и Республикой Польша были установлены дипломатические отношения, которые положили начало многообразному двустороннему сотрудничеству. 27 января 1998 г. в Варшаве правительствами двух стран было заключено соглашение о культурном и научном сотрудничестве, которое открыло новые перспективы для поднятия научно-культурных контактов и связей между армянским и польским народами на качественно новый уровень.

Укреплению и развитию культурного сотрудничества между двумя странами способствовали многочисленные мероприятия, проводимые под государственным патронажем. В течение последних лет в Армении и Польше прошли встречи руководителей и различных деятелей в области культуры, были достигнуты конкретные договоренности по углублению и расширению дальнейшего сотрудничества.

Этому способствуют десятки армянских общественных организаций и союзов, действующих в Республике Польша, которые выполняют объемную работу для сохранения культурного наследия польских армян. В этом плане неопределимой является деятельность основанного в 2006 году Фонда «Учреждение по культуре и наследию армян Польши» и «Союза армян Польши», которые за эти годы провели десятки патриотических мероприятий. В 1991-2014 гг. в Польше и Армении были проведены многочисленные культурные встречи, обсуждения, концерты, выставки, кинофестивали, творческие вечера.

Armenian-Polish Cultural Cooperation of 1991-2014

Matinyan Henry

Summary

Key words: *Armenia, Poland, cooperation, cultural heritage, cultural days, festival, exhibition, presentation.*

On 26 February, 1992, diplomatic relations were established between the Republic of Armenia and the Republic of Poland which launched a multifaceted bilateral cooperation. On 27 January, 1998, in Warsaw the governments of the two countries signed an agreement on cultural and scientific cooperation which opened new perspectives for bringing the scientific and cultural contacts and ties between the Armenian and Polish nations to a qualitatively new level.

Various state-sponsored events contributed to the strengthening and development of cultural cooperation between the two countries. Over the past years, meetings of cultural leaders and figures took place in Armenia, Poland, and concrete agreements have been reached to deepen and expand cooperation.

It is promoted especially by dozens of Armenian non-governmental organizations and unions functioning in the Republic of Poland, which carry out a large amount of work on the preservation of Polish-Armenian cultural heritage. 2006 is especially invaluable for this matter. The Polish-Armenian Cultural and Heritage Foundation, the union of Polish-Armenians founded in Warsaw organized dozens of pro-Armenian events. In 1991-2014, in Poland and Armenia a lot of cultural meetings, discussions, concerts, exhibitions, film festivals, creative evenings took place.

Ներկայացվել է 12.04.2022 թ.

Գրախոսվել է 12.05.2022 թ.

Ընդունվել է տպագրության 27.05.2022 թ.